Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-656-28.08.2023-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» 1994 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-121 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 36-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել նոր՝ 37-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«37) **մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատում**՝ իրավաբանական և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց կողմից մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հետևանքով մարդկանց առողջությանը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի այլ օբյեկտներին պատճառված բացասական ներգործության արժեքային գնահատում, որն իրականացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:».

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի հաստատումը.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի մշակումը.».

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3. Հատուկ սահմանված երթուղով և հատուկ հատկացված վայրեր շինարարական աղբի տեղափոխման (այդ թվում՝ տեղադրման) նկատմամբ վերահսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:».

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «:» կենտադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, և լրացնել նոր՝ 12-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«12) հատուցել սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետով սահմանված կարգով գնահատված վնասը:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

~~Երկրորդ ընթերցում~~
~~Կ-656-28.08.2023-ՏՏԳՇ-011/1~~

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» 1994 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-121 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

2. 36-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և ~~կետից հետո~~ լրացնել նոր՝ 37-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«37) **մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատում**՝ իրավաբանական և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց կողմից մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հետևանքով մարդկանց առողջությանը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի այլ օբյեկտներին պատճառված բացասական ներգործության արժեքային գնահատում, որն իրականացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:».

~~3. 36-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:~~

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի հաստատումը.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի մշակումը.».

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3. Հատուկ սահմանված երթուղով և հատուկ հատկացված վայրեր շինարարական աղբի տեղափոխման (այդ թվում՝ տեղադրման) նկատմամբ վերահսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:».

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «:» կենտադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, և լրացնել նոր՝ 12-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«12) հատուցել սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետով սահմանված կարգով գնահատված վնասը:»:

Հոդված 6. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-656-28.08.2023-ՏՏԳԾ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-656[1]-28.08.2023-ՏՏԳԾ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք լրամշակել մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետեւանքով առաջացած ազդեցության գնահատման սահմանումը՝ լրացնելով գնահատումը իրականացնող մարմնի և հասցեատեր սուբյեկտների վերաբերյալ կարգավորումները, ինչը կնպաստի նրան	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «իրավաբանական և» բառերից հետո լրացնել «և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող» բառերը, իսկ «արժեքային գնահատում» բառերից հետո լրացնել «որն իրականացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը վերաբերվում են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի նույն դրույթին՝ առաջարկում ենք միավորել 1-ին և 2-րդ կետերը: Ըստ այդմ՝ Նախագծի 1-ին	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			հոդվածից առաջարկում ենք հանել 2-րդ մասը, իսկ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «կետից հետո» բառերը փոխարինել «կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և» բառերով:		
3.	***ՀՀ կառավարություն***	**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 6-րդ հոդված**	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ առաջարկում ենք հանել Նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
4.	***ՀՀ կառավարություն***	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված պահանջին, որի համաձայն. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			«օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Ըստ այդմ՝ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 81.2-րդ հոդվածի՝»:		